# ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | ՀՕ-55-Ն |
| Տիպ | Օրենք |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (28.03.2026-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2026.03.16-2026.03.29<br>Պաշտոնական հրապարակման օրը 27.03.2026 |
| Ընդունող մարմին | ՀՀ Ազգային ժողով |
| Ընդունման ամսաթիվ | 04.03.2026 |
| Ստորագրող մարմին | ՀՀ Նախագահ |
| Ստորագրման ամսաթիվ | 26.03.2026 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 28.03.2026 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

# Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2026 թվականի մարտի 4-ին**

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 46.1-ին հոդվածով.

«**Հոդված 46.1.** **Գնման գործընթացի անընդհատությունը**

1. Գնման գործընթացի շրջանակում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումը չի կասեցնում գնման գործընթացը, եթե տվյալ գործընթացի հրավերը պարունակում է տեղեկություն գործընթացը հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերի ապահովման նպատակով կազմակերպված լինելու մասին:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունը հրավերում ներառվում է Հայաստանի Հանրապետության կառավարության նախնական համաձայնությամբ:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հանրապետության նախագահ** **Վ. Խաչատուրյան**

2026 թ. մարտի 26
Երևան
ՀՕ-55-Ն

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 27 մարտի 2026 թվական:**

**Փոփոխման պատմություն**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |

**Փոփոխված ակտ**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |